ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի գործունեության իրականացման պայմանների մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 2011 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հումանիտար ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի դրույթներով,

Կողմերի պետությունների ժողովուրդների կրթության և մշակույթի զարգացման գործում հետագա փոխգործակցության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրով Կողմերն ամրագրում են Երևան քաղաքում գտնվող «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) գործունեության իրականացման պայմանները, որը ստեղծվել է «Գազպրոմ» հանրային բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Գազպրոմ» ՀԲԸ) դուստր ընկերություն հանդիսացող «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Հիմնադիր) կողմից:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու՝ Կողմերի լիազորված մարմիններն են՝

- Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը,
- Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության լուսավորության նախարարությունն ու Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայությունը:

Լիազոր մարմնի փոփոխության դեպքում համապատասխան Կողմն այդ մասին մեկամսյա ժամկետում դիվանագիտական ուղիներով գրավոր տեղեկացնում է մյուս Կողմին:

Հոդված 3

Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հիմնադրի կողմից հաստատվող կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն):

Հոդված 4

Հիմնարկի կրթական գործունեության լիցենզավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, Հիմնարկի կրթական գործունեության պետական հավատարմագրումը կատարվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համապատասխան:

Կրթության ոլորտում դաշնային պետական հսկողությունը (վերահսկողությունը) Հիմնարկի գործունեության նկատմամբ և Հիմնարկում կրթական գործունեության նկատմամբ լիցենզիոն հսկողությունն իրականացվում են Հիմնարկի պլանային ու արտապլանային ստուգումներ կազմակերպելու և անցկացնելու միջոցով և դրանց արդյունքների հիման վրա միջոցներ ձեռնարկելով՝ նախատեսված յուրաքանչյուր Կողմի պետության օրենսդրությամբ:

Պետական հսկողության (վերահսկողության) շրջանակներում կրթության և լիցենզիոն հսկողության բնագավառում պլանային ստուգումներն իրականացվում են հանձնաժողովի կողմից, որի կազմը ձևավորվում է նախնական համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Ռուսաստանի Դաշնության լուսավորության նախարարության և, անհրաժեշտության դեպքում, Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության ներկայացուցիչներից:

Մի Կողմը մեկ ամսվա ընթացքում դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում է ուղարկում մյուս Կողմին հանձնաժողովի կազմի մասին:

Հոդված 5

Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ Հիմնարկը հայերենով իրականացնում է կրթական գործունեություն տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով՝ ռուսաց լեզվի պարտադիր դասավանդմամբ:

Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և համապատասխան դաշնային հիմնական հանրակրթական ծրագրերով Հիմնարկը ռուսերենով իրականացնում է կրթական գործունեություն տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ:

Հոդված 6

Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով սովորելու համար Հիմնարկ են ընդունվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների, այլ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց երեխաները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հիմնադրի կողմից հաստատվող՝ Հիմնարկ երեխաներին ընդունելու կարգին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով սովորելու համար Հիմնարկ են ընդունվում Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց երեխաները՝ Հիմնադրի կողմից հաստատվող՝ Հիմնարկ երեխաներին ընդունելու կարգին համապատասխան:

Հոդված 7

Ըստ Հիմնարկ երեխաների ընդունելության արդյունքների՝ Հիմնադիրը յուրաքանչյուր տարի որոշում է Հիմնարկում զուգահեռ դասարանների քանակը՝ Կողմերի պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ կրթական գործունեություն իրականացնելու սանիտարական նորմերին համապատասխան:

Հոդված 8

Հիմնարկի գործունեության ֆինանսական ապահովումը կատարվում է Հիմնադրի և (կամ) «Գազպրոմ» ՀԲԸ-ի սեփական միջոցների ու Հիմնարկի կողմից Կանոնադրությանը համապատասխան կրթության և այլ ծառայությունների մատուցման համար ստացված միջոցների հաշվին:

Հիմնադիրը և (կամ) «Գազպրոմ» ՀԲԸ-ն Հիմնարկի գործունեության ֆինանսական աջակցությունն իրականացնում է սեփական միջոցների հաշվին, մինչև Հիմնարկի ինքնածախսածածկման անցնելը: Գործունեության ընթացքում Հիմնարկի ստացած բոլոր միջոցներն ուղղվում են բացառապես Հիմնարկի գործունեության և զարգացման նպատակներին:

Հոդված 9

Այն անձանց, որոնք սովորել են Հիմնարկում, չունեն ակադեմիական պարտք, ամբողջ ծավալով կատարել են ուսումնական պլանը կամ անհատական ուսումնական պլանը (հիմնական ընդհանուր կամ միջնակարգ ընդհանուր կրթության կրթական

ծրագրերով ուսուցման յուրաքանչյուր տարվա ընթացքում ուսումնական պլանի բոլոր ուսումնական առարկաներից ունեն բավարարից ոչ ցածր տարեկան գնահատականներ), ինչպես նաև ունեն «ստուգված» արդյունք հիմնական ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացման շրջանակներում ռուսաց լեզվի ամփոփիչ հարցազրույցից, հիմնական ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացման շրջանակներում ամփոփիչ շարադրության (փոխադրության) համար և, Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հաջողությամբ անցել են հիմնական ընդհանուր կրթության կամ միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացումը եզրափակող պետական ամփոփիչ ատեստավորումը, տրվում են կրթության մասին փաստաթղթեր՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Այն անձանց, որոնք սովորել են Հիմնարկում, չունեն ակադեմիական պարտք, ամբողջ ծավալով կատարել են ուսումնական պլանը կամ անհատական ուսումնական պլանը (միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով ուսուցման յուրաքանչյուր տարվա ընթացքում ուսումնական պլանի բոլոր ուսումնական առարկաներից ունեն բավարարից ոչ ցածր տարեկան գնահատականներ), ինչպես նաև ունեն «ստուգված» արդյունք միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացման շրջանակներում ամփոփիչ շարադրությունից (փոխադրությունից) և, Ռուսաստանի Դաշնության դաշնային պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, հաջողությամբ անցել են միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերի յուրացումը եզրափակող պետական ամփոփիչ ատեստավորումը և ուսումնական պլանին համապատասխան ուսումնասիրվող բոլոր ուսումնական առարկաներից ունեն ուսման առաջադիմության «գերազանց» ամփոփիչ գնահատականներ, կրթության մասին համապատասխան փաստաթղթի հետ միասին Հիմնարկը շնորհում է «Ուսման մեջ հատուկ հաջողությունների համար» մեդալ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Այն անձանց, որոնք սովորել են Հիմնարկում, ամբողջությամբ յուրացրել են հիմնական ընդհանուր կամ միջնակարգ ընդհանուր կրթության ծրագրերը՝ Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և անցել են ամփոփիչ պետական ատեստավորումը, տրվում է կրթության մասին փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հիմնադիրը յուրաքանչյուր տարի Կրթության և գիտության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայություն է ուղարկում հարցում՝ Հիմնարկի հենքի վրա քննություն անցկացնելու կետ բացելու հնարավորությունն ուսումնասիրելու մասին՝ հիմնական ընդհանուր և (կամ) միջնակարգ ընդհանուր կրթության կրթական ծրագրերով Հիմնարկի սովորողների համար պետական ամփոփիչ ատեստավորում անցնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող և Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության կրթական կազմակերպություններ ընդունվելու ցանկություն ունեցող այլ քաղաքացիներին միասնական պետական քննություն հանձնելու հնարավորություն տրամադրելու համար:

Հոդված 10

Հայկական Կողմը աջակցություն է ցուցաբերում Հիմնարկի տարածքում իրավակարգի պահպանման հարցում:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված՝ Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 12

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրը կնքվում է 20 տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարված լինելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնելու սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելով մյուս Կողմին: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարում է այդ ծանուցումը մյուս Կողմի ստանալու ամսաթվից 12 ամիս հետո:

Սույն Համաձայնագրի գործողությունը երկարաձգվում է հաջորդ 10-ամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից ոչ մեկը հերթական ժամանակահատվածը լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին դիվանագիտական ուղիներով գրավոր չի ծանուցում մյուս Կողմին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2024 թվականի դեկտեմբերի «20» -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում օգտագործվում է ռուսերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝	**Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝**